



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltin

✓ 312

1999

ՉՆԱՇԽԱՐՀԻԿ ՏՂԱՅ

№ 111

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ե Ց

ՄԱԿԱՐ Վ. ԲԱՐԻՈՒՏԱՐԵԱՆՑ



Տպարան Ըստ Հայոց Հայոց Տպարան

1886.

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԱՎ

Պատմութիւնն կամ վեպասանութիւնն ան-
ներելի յանցանք գործած կը լինէին, եթէ իւրեանց
եջերում ամփոփելով չ'անմահացնէին առաքինեաց
անունները և արարքները և չ'աւանդէին այդ առ-
մենը իբրև կենդանի տիպար յօրինակ ներկայ և
ապագայ սերնդոց :

Առաքինութիւնք հասարակաց են, որք և
յափշտակում են հաստատակամ հետապնդողներից :
Կարող են առաքինի լինիլ ծերունի և պառաւ,
այր և կին, երիտասարդ և հարս, պատանի և օ-
րիորդ : Իսպա ամեն որ շատ և շատ զարմանում է,
երբ տեսնում է փոքրահասակ աղայոց վերայ առ-
աքինութիւններ, որք բացուած են ինչպէս ան-
ժամանակ, բայց գեղեցիկ վարդեր և փայլում են
ինչպէս հազուազիւտ ադամանդներ մարգարտաց մէջ :
Աչա սյսպիսի հազուազիւտ առաքինիներից մին և
երեքտասանուանեայ Իսահակ Խունունցն :

Մենք զմեզ պարաւառ զգացինք ՚ի ըստ
հանել Իսահակ Խունունցի կենսապատճիւնը, յու-
սարով որ մեծապէս կը շահուին սորբանից ամենա-
սիրելի այ Աղղի ուսանող և սւսումնաւարտ աղայք
և աղջ կունք, պատանիք և օրիորդք : Սակայն մենք
զիեցինք ինչ որ սառուցիւ գիտենք, ինչ որ աեսած
ենք աջք, ինչ որ շշափած ենք վարժապետական
փորձով և ինչ որ ճշմարիտ է և անաշառ :

Дозволено Цензурою. Тифлисъ, 30 Апрѣля 1886 г.



28.315

գ 312 - 60

Գարծիս Ա. զլուխը — «Գաղթականութիւն Կազմանչեցւոց» — քաղեցինք ծերոց բերանացի աւանդութիւնից: Այն ծերունիներն մատնանիշ արին ձեթումեանց Ելեքսան-բեկի մօտ գտնուած ձեռադիր պատմութիւնը, որի մէջ մանրամասնաբար գրուած է, նցն գաղթականութեան անցքերը: Ելեքսան-բեկին պատմեց թէ. «Ճշմարիտ է այդ աւանդութիւնն և կար մեր տան մի ձեռադիր պատմութիւնն, որը զրած է ձեթումեանց Ստեփանոս հավիսկոպոսն իբրև տկանատես պատմադիր, որին շարայրած է իմ հայր Տէր-Դեռնդ քահանան և իւր օրով պատահած զիխաւոր անցքերը: Ստեփան ցաւալին այն է որ այդ ձեռադիր պատմութիւնն մի տարի տառած գողացուած է մեր տանից»:

Այս աւանդութեան և ձեթումեան Ստեփանոս հավիսկոպոսի պատմութեան նմոն (որը մի քանի անձմինք կարգայած են և վկայում են) մի պատմութիւն գտնուում է և Չամչեանի Հայոց Պատմութեան Գ. Հատորի «Գիրք վեցերորդ», Գ. Խ. Օ. Ա. և Ի. Հատուածներում:

Հետեւապէս «Չնաշխարհիկ Տղայ» և մէնք նուիրում ենք մեր տեմնասիրել աշակերտ Խաչակ Խունունցի յիշատակին իբրև յաւերժական սիրոց մշտախօս արձան:

Մուշտ Ա. Բարեկառութեանց

1886. Յունի. 20 ՚ի Ծուշ:

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՆՁԵՑԻՈՑ *)

1748 թուին Երբահիմ-Միրզան կուրանցնելով իւր եղբայր Ասիլ կամ Աալ-Շահի աչքերը, ժառանգում է Պարսից գահը և նստում Թաւրիզ քաղաքում: 1749 թուին Հին-Խախիջեանի, Ջահիկի, և Գաղթան գաւառների Հայ իշխանաց հետ զնում են Թաւրիզ և Շահիկերացի Յովհաննէս, Վխիթար և Վաղար իշխաններն և Երբահիմ-Շահին սաստիկ բողոքում են Հին-Խախիջեանի Հիյաստ-Դուլի-խանի բոնարարութեանց մասին, որոց պատճառաւ այդ գաւառների հայ ժողովրդից մի մասն գաղթած էր զանազան տեղեր:

*) Ղազանչին, որի հին անունն է Շահիկերառաւան, գտնում է Գող թան գաւառում Հին-Խախիջեանի և Ագումիսի միջեւ: Շահիկերացիք զրեթէ մեծ մասամբ պղնձագործ եղած են. «Ղազանչի» երկրորդ անունն ծագումն առած է արտեսալից, այն է թաքքերէն պղնձագործ բառից:

Երբահիմ-Շահն խսկոյն հեռացնում է Հին-Նախիջևանի խանութիւնից այդ բոնաւոր Հեյտար-Վոլբ-Խանը և սորա տեղ առժամանակեայ կառավարիչ նշանակում պաշտօնանի խանի եղբօրորդի Ելե-Վոլբ-բէկը: Ասկայն Հեյտար-Վոլբ-խանն յաջողում է վերստին կաշառքով ձեռք բերել իւր նախին պաշտօնը և նոյն հայ իշխաններից վրէժ լուծելու ծարաւով պատրաստում է առաջեկայ գարնան յարձակիլ Վաղանչու վերայ և կոսորել Յովհաննէս, Միհիթար և Վաղար իշխանները, որք իւրեանց քաջութեամբ և արիութեամբ նշանաւոր էին բոլոր հայ իշխանաց մէջ:

Յովհաննէս-իշխանն, կանխաւ տեղեակ լինելով խանի չար զիտաւորութեանն, պատապարում է իւր բոլոր ժողովուրդը Վաղանչու հիւսիսակողմն եղած բարձր սարի գագաթի բերդակում, որն հնուց արդէն կար: Իշխանաց հեռաւոես խորհրդով աճապարանօք նորոգւում են բերդակի կասկածաւոր տեղերն, լեռան սասրաւից բերդակն ջուր փոխարքելու նախազգուշութեամբ, սարի Վաղանչու կողմի լանջի վերայ շինուում են մօտ առ մօտ բուրգեր, որոց մէջ պահպաններ կրուելով սպահովուում է ջրի փոխարքութիւնն: Ծերդակում փութով ձուլուում են թնթանօդներ և պատրաստում են առաս գնդակ և վառօա: Եցս գործում մեծապէս նպաստում են պղնձագործ արուեստաւորք

և պղնձի արդէն պատրաստի առատ պաշարն:

1750 թուին Յունիսի 5-ին Հեյտար-Վոլբ խանն մի քանի հաղար զօրքով յարձակուում է Վաղանչու վերայ: Խակ Յովհաննէս-իշխանն քաջալիբ բելով խրախուսում է իւր զօրքը կամ արիաբար պատերազմել թշնամուն գէմ, կամ գիւցազնաբար յաղթել նմո և կամ տղամարդօրէն նահատակուիլ և վաս անուն չ'թողնել աշխարհի մէջ: Ակուում է կատաղի պատերազմն: յաղթող են հանդիսանում Հայերն և ջարդուում է Հեյտար-Վոլբ-խանի զօրաց մեծ մասն: Այն խանն, տեսնելով որ ջարդուեցան իւր զօրաց ստուար մասն, տեսնելով մանաւանդ որ բերդակի բարձրութիւնից արձակուած զնդակներն զործում են մեծամեծ կոտորած, իսկ իւրեանց արձակածներն բերդակին անգամ չեն հասնուում զառ ՚ի վեր լինելու պատճառաւ, ուստի և բերդակն մնում է անառիկ և անմերձենալի, վասն որց ակամացից խօնարհուում է հաշտուիլ հայ իշխանների հետ: Խանն երեք անգամ պատզամուորներ զբկելով երգմամբ խօսաննում է հաշտուիլ, բայց Հայերն չհաւասարով մերժում են: Երբորդ անգամ նոյն պատզամառքը զալով և բազմազիմի երգումներով հաւատացնում են Հայերին, որք իջներով լինից և բերդակից հաշտուում են խանին հետ: Բայց յետոյ Հայ - Իշխաններն խանիցն

Հրաւիրում են Հին-Նախիջևան խնձոքի, ուր,
ինչպէս յատուկ է նենգաժէտ անձանց և երդմնա-
զանց գաւաճանների, խանիցն թունաւորում է
Յովհաննէս-Նշխանն և վախճաննեռում:

Միւս իշխաններն, անսագան ուրեմն զգալով
երդմնազանց խանի գաւաճաննութիւնը և կասկա-
ծելով թունաւորուելուց, դիմում են Վաղանչի և
տեղւոյն հայ ժողովրդեան ամենամեծ մասի հետ
զաղթում՝ ի Փաքր-Միւնիք 1750 թուին Յու-
լիսի 10-ին։ Վաղթականներից փոքր մասն ապաս-
տանում է Գիղակի Մելքը-Խոսայուն, իսկ ամենա-
մեծ մասն Վարանդի Մելքը Շահնազար Գան։
Մելք-Խոսային իւր հիւրերը բնակեցնում է Հաս-
րութաւանում, ուր մնում են ցարդ զաղթակա-
նաց յեականներն։ Իսկ Մելքը-Շահնազար Գան
նախ բնակեցնում է Վարանդի զանազան զիւղե-
րում և ապա 1752 թուին փոխազրում է այդ
զաղթականները *) ՚ի Շուշի, երբ այս նորակա-
ռայց քաղաքն արդէն կարօտ է լինում բնակչաց։

Շուշի զաղթած սոյն ժողովրդեան յեակա-
նին կազմում են այժմ քաղաքիս ամենազլիսաւոր,
հարուստ և պատուաւոր տարբն։ Եյս զաղթակա-
նաց յեականներն 135 տարիներ Շուշում բնակե-
րով հանդերձ, իրանցից անբաժան պահած են

*) Ագուեցիք ևս Վաղանչեցւոց նման մի գեպով Ագու-
էիսից Շուշի են գաղթում 1752 թուին։

“Վաղանչի” անունը։ Եւ ոչ այսօափ միայն, այլ
և ցարդ կոչումը են այդ նուիրական բառի սրբա-
գործուած անուամբ։ “Վաղանչեցւոց Աշկեղեցի” և
“Վաղանչեցւոց Ժաղսվուրդ” և “Վաղանչեցւոց
Հասպակութիւն”։

Ահա սոյն զաղթականներից մին եղած է
Խունունց Յովհաննէսն, որից ծնուած է Մահ-
տեսի-Գրիգորն, Մահասի-Գրիգորից Պարս-Մի-
նան, իսկ Պարս-Մինասից Խաչակին, որի մա-
սին կը խօսինք։

—————

ՃՆՈՒՆԴ ԵՒ ՃՆՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Իսահակ Խունունցն ծնաւ 1873 թուին
Յունվ. 17-ին և սնաւ իւր ծնողաց զմկում մինչեւ
իւր եօթն տարեկան հասակն։ Իսահակի մայրն
ամիկին-Օստինն Աւնանենց Խարա-ապօր գուտորն է։
Ուրեմն Իսահակի ծնող քն Պարս-Մինան և
ամիկին-Օստինն, լինելով Շուշու հարուստ, պա-
տուաւոր, աղնիւ և տոտնակալոց գասակարգից,
կազմում են մի բնախիր զերգաստան։ Հարկ չկայ
առել թէ այս զերգաստանն սիրելի եղած է Շուշու-
հասարակութեան իւր աղնւութեամբ և համեստ

վարքով ու բարքով։ Առքա բացի Խսահակից ունին այլ ևս հինգ որդի և երեք զուստր, որոց մէջ երրորդ ծնունդն է Խսահակն։

Բարի ծնողքն մեծապէս հոգում էին ինչպէս միւս զաւակաց, նոյպէս և Խսահակի ընտանեկան կրթութեան և գաստիպակութեան մասին։ Նոքա ամենայն շրջանկատ զգուշութեամբ հսկում էին և դեռ հսկում են իւրեանց զաւակաց ուտելուն, խմելուն, հագնուելուն, նստուածքին, շարժողութեանց և խօսակցութեանց վերայ, որպէս զի երախայք լինեին մաքրասէր, չափասէր, ծնողասէր, եղբայրասէր, ծանրակաց, հանդարտաբարց, ճշմարտախօս, բարի, ազնիւ և ուղղապատում։ Պարոն-Մինասի բացակայութեան ժամանակ արկին-Զառուն վերայ է մնում այդ բոլոր հոգաաարտութիւններն, զորս կատարում է ամենայն համբերատարութեամբ և աշարջութեամբ իրեւ անխուսափելի պարտաւորութիւն և իրեւ «մայր» բառի նշանակութեան իսկապէս տիպար։

Ոյն ազնիւ ծնողքն, պատուիրտուած լինելով մի հայ ուսուցչեց, նախ ուսուցանում են երախայոց մերձաւոր առարկայից անունները և ապա հեռաւոր առարկայից անունները։ Մանկանց մարմնոյ մասունքներն կամ անդամներն աւելի մօտ լինելով, ուսուցանում են արտասանել զլուխ, մաղ, ճակատ, յօնք, աչք, քիթ, երես, բերան, ձեռք, և այլն։

Յետոյ կարգաւ սովորացնում են զգեստի անունները, օրինակ շապիկ, զլամարկ, կօշեկ, կրկնակօշեկ, և այլն. անկողնոյ մասերը, մահակալ, անկողն, սփոց, վերմակ, բարձ, և այլն։ Եպա անամիջի բոլոր կաչ ու կալասեաց, կերակրոց, ամանների, անօթների, փրծիքների, տան մասերի, պարտիզի, ծառերի, ծաղկների, կանաչըլբնների և այլն, և այլն, անունները և տեսակները և համրել են տալիս մէկից մինչեւ յիսուն թիւերը։ Աարկ չ'կայ առել թէ մանուլիներն այսպիսով ծանօթանում են իւրեանց տեսած բոլոր իրերին և սովորում են նոցա անունները։

Խսահակն, զինքը շրջապատով առարկաների անունները ուսանելուց յետոյ, բարձրացնում է դէպի վեր իւր աչաց հետ և իւր հետաքրքիր մտապրութիւնը և հարցմամբ սովորում Խստուած, երկինք, արեգակ, լուսին, աստղ, թուղթ, անձրե, ցող, կարկուտ, եղեամն, ձիւն և աղեղն բառերը։

Խսահակն, իւր հնդամեայ տարկիքը լրացնելուց վերջն, իւր սիրելի հօր հետ յաճախ գնում է եկեղեցին։ Ետ թէ փողոցներումն և թէ եկեղեցումն անսպառելի հարցեր է առաջարկում իւր հօր և պահանջում պատասխանները։ Եյդ պատասխաններով նա սովորում է իւր տեսած փողոցների, աների, խանութների, եկեղեցւոյ պատկերների, զարգերի, անօթների և սպասների անունները։

Խւրացող ճետ զրօսնելու դնացած ժամանակ նմանապէ, յաձախ հարցեր առաջի և պատասխան ները սահմանալով նովորումէ իւր տեսած լիւսների, ըլունիների, գիւղերի անառաջների, գետակների, և յլն անունները.

Պարուն-Անառն, սովորաբար հինգ տաղափարներին երախայքքը մաքուր հաղցրած և զարդարած տանումէ է եկեղեցին, ուր ամենքն ազօթումէ, **Ա. Խորհրդին** հաղորդում, տուն վերագաւառմ, մի մի բաժակ զինի վայելում սրբութեան վերայ և ապա ճաշում են միտանի:

Խսահակն, ամեն առաւօտ երբ զարթնումէ է քնից լրտանում էյխիր երեսը բանալիր ջրով, մաքուր երեսարբչով սրբում, գեղեցիկ համեւում, կրկիկ տանկարնում, ծնողաց ձեռները համբուրում, եղարց եքեաց ձեռքերը սեղմում, ամենին «Բարի րիս», մաղթում էյխոյ իւր բաժին թէյր վայերում: **Աի և նոյն ձեռք «Գիշեր բարի» է մաղթում գիշերներն, ապա բաժանուում քնանարու:**

Խսահակն չափաղանց սիրում է, սոխակը, վարդը, պատիերազմարդ զրքերը և լրագիրները: **Այս զ գումէ է առանձին ուրախութիւն լսել այն գեղին սիրակի գեղգեղանքը, որն միշտ երգում է իւրեանց գահձից կախուած գեղեցիկ վանդակում: զ գումէ է յատուկ զրւարձութիւն տեսնելով և հոտուալով այն գեղափայլ վարդերը, որք բացւում**

են իւրեանց պարտիզում, զ զումէ է և մասնաւոր զրւարձութիւն ուշի ուշով նայելով զրքերի և լրագիրների պատիերները և նկարները, որք կան այդ թղթերում հաղարաւոր մարդոց, կենդանեաց, թունոց, ծառոց, ծաղ կանց և սողնոց: **Եցր օրից սկսեալ հայրն բերել է տալիս պատիերազմարդ զրքեր և լրագիրներ յուրախութիւն և՝ ի զրւարձութիւն Խսահակն. իսկ մայրն տան մէջ ևս պահումէ ամսական վարդեր, փոյթ խնամով պահպանում և անձամբ գարմանում ՚ի սէր իւր սիրական որդուն:**

Երբ, հրաւերքների կամ այցելութեանց պատճառաւ, բայցակայ են լինում իւր ծնողքն, Խսահակն զրան առջե անհամբեր սպասում է նոցա զարձնի: **Ամեն անդամ այն ինչ ներս են մօնում իւր ծնողքն, Խսահակն իսկոյն զրկաբաց վարում է նոցա առանձին առանձին գեղաժալիս դիմոք, քաղցր նայուածքով և որդիական բուռն սիրոց զ գացմամբ և ուրախութեան ազաղակներով ու ցնծութեան նշաններով բազմիցս կրկնում է սոյն նուիրական բառերը, «Ասցրի՛կ, հայրի՛կ, մայրի՛կ, մայրի՛կ»:**

Խսահակի սերտ ծնողասիրութիւնն, մեղրածորան լեզուն, համակրելի ծիծաղն, քաղցր ձայնն, ծանր խօսակցութիւնն, շնորհալի շարժուածքն և հանդարտակաց նստուածքն առ ինքն է պրաւում ինչպէս իւր ծնողաց, աղքականաց և բարեկամաց,

նոյնպէս և բոլոր այցելուաց սէրը և համակրութիւնը, զօր օրինակ վկայում են բոլոր տեսնողներն և ծնողքն։ Այս պատճառաւ Յովսէփ-Գեղեցիկն իւր բոլոր առաքինութիւններով որբան սիրելի եղած էր Յակովը՝ Խաչապէտին, Խաչակին ևս իւր բոլոր բարեմասնութիւններով այնքան սիրելի եղած է իւր ծնողաց և ամեն ազգականաց։



Պ.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ

Հասանեկան ուսմունքը և կրթութիւնը ստանալուց յետոյ, Խաչակին անշրաժեշտ հարկաւոր էր ստանալ նաև դպրոցական ուսում և կրթութիւն։ Խաչակին, որ անպայման հնագանդում էր իւր ծնողաց կամացն, Պարոն-Մինասի կարգադրութեամբ 1879 թուին Աեպսեմ. 10-ին մտաւ Շուշու «Հայոց Հոգեոր Ուսումնարան»-ն, ուր և սկսաւ ստանալ մայրենի լեզուի ուսումը Ա. Պատրաստարանում։

Այդ տեղ ամենայն ինչ նորութիւն է Խաչակի համար, նոր նոր ձեռով նստարաններ, նոր նոր ընկերներ, նոր նոր ուսուցիչներ, նոր բառեր խօսքեր, խօսակցութիւններ և տառեր, նոր լեզու,

հարցեր և պատասխաններ, կարգեր և կանոններ։ Այն իսկ ուսումնարանն մտած օրից Խաչակին զգաց որ իւր առաջ պատրաստ էր մի յեղափոխական, ամենամեծ գժուարութիւն, այսինքն վարժապետաց խօսած լեզուն բոլորվին տարբեր էր իւր ծնողաց իրան հետ խօսած լեզուից, որը ինքն սովորած էր արդէն։ Պլիովին տարբեր էին նաև բառերի և հնչելների ձայներն և պատմելու եղանակներն ու ձեւերն, վասն որպէս նորա մէջ բացուեցաւ մի բարյական մենամարտութեան ասպարեզ։ Նա որոշեց հաստատակամ ջանքով հետզհետէ յաղթել այդ բոլոր գժուարութեանց, իւր ընթերցանութեան հետ տատիճանաբար ուզզել իւր լեզուն և բուն վարժապետաց խօսակցութիւնն նմանեցնել իւր խօսակցութիւնը և պատմած պատմութիւնները։ Նա ինչպէս որոշեց, այնպէս և արաւ և փոքր առ փոքր յաղթեց ամեն գժուարութեանց։

Խաչակին ուսումնարանից տուն վերադարձած ժամանակներում, որպէս պատուիրուած էր իւր ուսուցիչներից, անեցւոց հետ խօսում էր նոր ուսում լեզուի բառերով։ Նա աշխատում էր անեցւոց անդամ ուսուցանել իւր ուսած նոր լեզուն, եթէ հնարին լինէր այդ։

Վանկութեան հաստից սկսեալ Խաչակին զարմանալի սէր ձգեց ուսման և ուսումնարանի

վերայ, որպէս թէ ամենասիրելի և զուարձալի առարկաների վերայ։ Ամեն առաւօտ, երբ զաթնում էր քնից, վայելում էր թէջը, համբուրում էր իւր ծնողաց ձեռները, շալակում իւր փոքրիկ բեռը, ուր զետեղուած էին լինում սովորաբար իւր գատական առարկաներն և ապա զուարթադիմն զիմում էր ուսումնարան։

Խառհակն 1880 թուին փոխուեցաւ Տ., Պատրաստաբանն, իսկ 1881-ին Գ., Պատրաստապանն։ Ամեն ապրի գատարանը փոխելուց վերջն սփանում էր իւր հօրից իրու պարզեւ մի ձեռք նոր հագուստ, մի զիրք և գատական գեղեցիկ առարկաներ։ Նուէր առացած զրքերն էին «Զորս մանրավէպ», «Կոռուծազիկ», և «Մայրենի լեզու» Տ., Գ., և Գ. տարի։

Ամեն օր տուն գտանալուց յետոյ, Խառհակն ըստ հրահանդի ուսուցչաց ձաշում էր, մի ժամ զբունում պարտիզումն, ապա պատրաստում հետեւալ աւուր գատերը և ապա կարգաւ կարգում իւր հօրից նուէր ստացած զրքերը մինչև քնանալու ժամանակ։ Զուարձալի պատմութիւններն արծարծեցին մանկան մէջ սէր յաճախ կարգալու, որին մէծապէս օգնում էին և իւր հայրն և իւր մէծ եղբայր Լեռն։ Կարգացած ժամանակ զիծ էր քաշում այն բառերի ասկով, որոց նշանակութիւնները ոչ ինքն զիտէր և ոչ իւր մէծ եղբայրն։

Հետեւալ առաւօտեան տանում էր իւր հետ զիրքը և զարժապեսից պահանջում չմանցած բառերի նշանակութիւնները զասառութիւնն սկսուելուց առաջ։ Ուսման և կանոնաւոր ընթերցանութեան անընդհատ շաբունակութեամբ նա սկսաւ հետք հետէ վարժ կարգալ, ըմբանումը ասաթմանաբար սրել, միտքը փոքր առ փոքր զոխացնել, սահպ արտապրութեամբ ուզգագրութեան վարժուիլ, խօսակցութիւնը զգուշութեամբ զեղեցիացնել և զգացմունքները սակաւ առ սակաւ առաջնորդել զէպի բարին, օգտակարն և զեղեցիին։

Խառհակն Գ. Պատրաստապանում հանգիպեցաւ և մի նոր գժուաբութեան — ուսուերէն լեզուի։ Ոկբում ամեն ինչ խորթ էր աղայի համար, խորթ էին սուսերէն տառերն, հնչեւններն, արտասանութիւնն, զբութիւնն և խօսակցութիւնն։ Սակայն նա յագթեց և այդ բոլոր խորթութեանց իւր հաստատակամ ժրաշանութեամբ և կանոնաւոր շաբունակութեամբ։ Հետզհետէ սկսաւ խօսիլ, զիել և կարգալ սուսերէն լեզուն ևս։

Եսամսեայ արձակուրախ ժամանակ ծնողքն հսկում էին որ Խառհակն չահսակցէր և ընկերակցէր փողոցային և անզործ աղայոց հետ, որպէս զիշուսանէր նոցանից անախորժ սովորութիւններ, անհաճոյ տալաւորութիւններ և գատարկասիրութիւն։ Երեկոյեան ժամանակ, որոց մէջ տարածւում էին

լեռնասուն զովերն, Պարոն-Վինասն անձամբ տառում էր երախայքը, մանածում զուարձալի տեղերում, ցոյց տալիս հեռուից շըջակայ տեղերը և վերադարձնում առւն: Խսահակն առաւօտեան զովժամսկներում կարգում էր զուարձալի և դիւրմբոնելի վէպեր և պատմութիւններ և չիմացած բառերի նշանակութիւնները ուսանում էր բառարանին նայելով: Վի հայերէն զիրք ամբողջապէս կարգալոց վերջն, ամբողջապէս կարգում էր և ոռուսերէն գասագիւքը, որպէս զի զուզընթաց յառաջ տանէր երկու լիզունները ևս, չիմացածների համար նայելով ոռուսերէնից հայերէն բառարանին: Խսկ ճաշեց յետոյ քնանում էր մի ժամ և զարթնելոց վերջն կրկին շարունակում ընթերցանութիւնը ապա արտագրում էր մի երես հայերէն և մի երես ոռուսերէն:

Եհա այսպէս անցան: Խսահակի մանկութեան օրերն, ծնողական գաստիարակութիւնն և նախնական ուսումն ու կրթութիւնն:



Խսահակն այսպէս անցան: Խսահակի մանկութեան օրերն, ծնողական գաստիարակութիւնն և նախնական ուսումն ու կրթութիւնն:

Դ.

ԽՍԱՀԱԿՆ ՐԷԱԼՆՈՒՄ *)

Խսահակն թողեց հայոց հոգեւոր ուսութիւնարանը 1882-ին և Յունիսի 10-ին լաւ քննութիւն տալուց յետոյ: Այն թուականի արձակուրացից սկսեալ մինչև Փետ. 20-ն, ոռուսերէնի համար միայն պատրաստուեցաւ մի մասնաւոր վարժապետի մօտ և, ըստ ցանկութեան իւր հօր, Փետ. 22-ին մտաւ Շուշու Ռէալնու Վեծ-Պատրաստարանն՝ լաւ քննութիւն ներկայացնելուց յետոյ:

Խսահակն այդ տեղ ծանօթացաւ հայերէն քերականութեան Վ. մասի բոլոր նշանական բառերին, որք սովորաբար կոչւում էն «մասունք բանի»: «Օանօթացաւ նա և պարբերութեանց, նախադասութեանց, կէտալբութեանց և նշանական ձայներին, ինչպէս են հարցկան, զարմացական, կոչական,

*) Արդէն շատերին յայտնի են բէալնիների ծրագիրն և ուսանելի աւարկացից պքանութիւնն: Այս պատճառաւ մնաք միայն խօսում ենք հայերէնի մասին, աւելորդ համարելով կրկնաբանութիւնը:

են, և անուանց հոլովէերին: «Առ այնքան գեղեցիկ սովորում էր, մինչև անգամ մի պարբերութիւն առնելով զատում էր միջի նախադասութիւնները և ամեն մի նախադասութիւն կարգարով՝ մի առ մի որոշում էր նորա միջի բոլոր բառերը և առաջի իւր տեսակի անունը, ինչպէս աւանդում էր թէ՛ առանձին զբելով և թէ՛ մայրենի լեզուի գերայ կարգարով: Հասարակ ընթերցանութեան ժամանակ, նախը կարգում կարգում էր մի հասուած, հարցնում շիմացած բառերի միաբը, պատմում անգիր ամբողջ հասուածը, հանում հետեւթիւնը ասելով թէ՛ ոյ հասուածն ան+ ուլուեցան+ ոյ+ նու բարոյակա երացը ւոյզին+ ոյ+ նու օդուրը:

Արօնի զասագիրքն էր Ա. Պատմութիւնն այն Կատակրանի և ուսուցման շրջանն «Երարշագործութիւնից» «մինչև «Դաւթի թագաւորութիւնն»: Էսահակին անցիր պատմած ժամանակ կենցանացնում էր պատմութիւնը: Ենպէս ուզեղ, համարձակ, փառահ, ողերուած և ծանր պատմում էր մի ամբաղջ պարուիր, հանում հետեւթիւնը և բացասպում զլիի բովանդակութեան բարոյականը, ինքան անգամ ուրախանում, զմայրում և զարմանում էր: Խոյրովին ճշմարիտ կը լինի, եթէ ասենք Էսահակին իրան աւանդուած բառերը պատասխանում էր այնպէս, ինչպէս աւանդում էն վարժապետներն աշակերտաց:

Ա. Պատմանում, համաձայն ծրադրին, վերջացուց նու Ա. Պատ. Նին-Կատակրանի, Մայրենի լեզ. Գ. առարի և քերականութեան կէսը հանդերձ զբութեամբ և վերլուծութեամբ:

Բ. Պատմանում աւարտեց Ա. Պատ. Նոր Կատակրանի և քերականութեան შնայած մասը: Քերականութեան կանոնների համար իւր մաքից զբած օրինակներն գեղեցիկ էին, խորհրդառոր և իմաստաբից: Գ. Պատմանում աւարտեց Քրիստոնէականը, ամբարելով իւր սրտում կրօնի մասին զբացած ընակիր տպաւորութիւններ, որովք աւելցան հետզ հետէ նորա աստուածպաշտութիւնն, ջերմեսանդութիւնն, կրօնասիրութիւնն և եկեղեցակալութիւնն: Նոր-կատակրանի պատմութեան բարոյական աղջեցութիւններն մանաւանդ թողնում էին նորա փափուկ սրտի և ընդունակ զբացմանց մէջ խոր տպաւորուած սերմեր, որք աճում էին Էսահակի հասակին հետ:

Մայրենի լեզուի մէջ Էսահակն կարգում էր «Ճայկի պատերազմը Ի-էլի զէմ», «Երամի քաջագործութիւնները», «Երա-զեղեցիկի», «Ելայի պատերազմը Ծամիրամի հետ», «Տիգրան Երևանցին», «Տրյատ թագաւորը և Գրիգոր Լուսաւորիչը», «Վեծն Աերսէս», «Սահակ պարթե», «Մեսրոպ մաշտոց», «Վարդանանց պատերազմը», «Վահան Մամիկոնեան» հասուածները:

Վասյելով Խաչակի հասակի փոքրութեանն, նա չափազանց զգացուն էր և անհաւատալի դիւրազդաց սրտի աէր, որի նման երախսայք հազուազիւտ են այդ հասակում։ Դժուարանում է մեր գրչի լեզուն բացատրել այն ամենը, ինչ որ մենք տեսած են նշանած ենք Խաչակի անձնաւորութեան մէջ։

Խաչակն 1885 թուին և Աեպ. 2-ին մոտաւ Դ. Գասարան։ Ճարկ չկայ ասել թէ նա ինչպէս յառաջադէմ էր հայերենի մէջ, նմանսպէս յառաջադէմ էր և ուստի ու զաղղիերէն լեզուների բոլոր առարկաների մէջ։ Եհա այս է պատճառն որ նու ամեն ասրի փոխում էր իւր դասարանը և այն համարեա՛ թէ առանց կրինաքննութեան։

ԻԱՅՍԱԿԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԲԱՐՔՆ

Խաչակի վարքն ու բարքն զովութիւններով հանգերձ հաշտկուած են թէ ընտանեկան կեանքում և թէ ուսումնարանական շրջաններում։ Խնչպէս վկացում են նորա ծնողքն, Խաչակն, իւր վեցամեայ հասակը լացնելուց յետոյ, ոչ խոռովել

գիտեր, ոչ չնչին իրերի համար լալ և ոչ իւր ծնողներից ժամանակ կամ անժամանակ իրեր պահանջել, որք յատուկ են այդ հասակի մանկանց։ Նա միշտ ուրախ, միշտ զուարթ և միշտ հետեւող եղած է իւր ծնողաց հրամաններին և ամեն ակնարկութեանց հրու հպատակութեամբ։

Խաչակն իրը կամենում էր գնալ մի ազգականի մօտ կամ բարեկամի և կամ ընկերակցի տուն, ինչպէս պատուիրուած էր, նախ ստանում էր հրաման իւր ծնողներից և ապա գնում։ Ծնողքն ապահով էին լինում նորա զնացած տեղը կանխաւ իմանալով։ Նա իւր գնացած տեղերում նստում էր համեստութեամբ, աեսակցում և խօսակցում պարկեշտութեամբ և վերագառնում պատուով։ Նա այս սուպքինութիւններով միշտ պատիւ և պարծանք էր մատակարարում իւր ծնողաց։

Ոչինչ պական գովութեան արժանի էին նորա վարքն և բարքն Ճայոց Ճոպ։ Ուսումնարանում և Թէալնում։ Նա ուսմակութիւն արաւ ծշտութեամբ կատարել բոլոր վարժապետաց այն պատուելոները, որք վերաբերում էին ուսման յառաջադիմութեան և ընկերակցաց հետ վարուողութեան համար։ Ուսուցիչներն դասարան մտնելուց յետոյ, Խաչակն ամենեին ոչ խօսում էր, ոչ ձեռները խազացնում և ոչ ուսպերով տախտակիները թրիմթրիսկացնում և ոչ ծիծաղում, ինչպէս տեսնուում են այդ

թերութիւններն շատ աշակերտաց վերայ, այլ
ծանր նստած ամենայն ուշագրութեամբ լուռմ էր
պատմողներին կամ վարժապեաններին։ Երբ հարկն
պահանջում էր լրացնել պատմող աշակերտաց պա-
կաս թողած պատմութիւնը կամ հարց տալ ու-
սուցչաց, նու կանգնում էր համեստութեամբ, որը
տեսնելով գաղրեցնում էին ուսուցիչքն պատմու-
թիւնը կամ գասը և խօսք տալիս Խաչակին։
Ես քաղաքավարութեամբ նու յարգում էր գասա-
րանի վեհութիւնը, պատում կարդ ու կանոնը և
համեստութեամբ ուղղում պատմութեան կամ զափ
պակասնորդը։ Եցս բարեմասնութիւններով Խա-
չակին կենդանի տիպար և օրինակելի պատկեր էր
չանգիսանում իւր մասած բոլոր զասարաններում։
Վարժապեաններն Խաչակի նստարանի վերայ
նստեցնում էին յաճախ խօսող և գասը անհան-
գարտութեամբ խանգարող աշակերտները։ Եցս պե-
սեք Խաչակից բարի օրինակ առնելով հետպշետ
ուղղում էին իւրեանց թիւրութիւնները։

Խաչակին բնաւորութեամբ համեստ, ծանր,
ազնիւ, պարկեշտ, ամօթխած, հեղ, խոնարհ, պա-
տուասէր և աշխատասէր աղայ էր։ Աչ Խաչակին
զանդատած է ոչ ոքից ցարդ և ոչ մի աշակերտ
Խաչակի մասին։ Սա բնաւ չ'գիտէ ոչ կեղծել, ոչ
պատրասիել և ոչ փոփոխել որեիցէ գետք կամ
եղելութիւն և կամ խօսակցութիւն։ Ամեն բան

պատմում, խօսում և վկայում էր նոյնութեամբ,
ջտութեամբ և անաշառութեամբ։

Սա տան մէջ, եկեղեցում, ուսումնականում
և ճանապարհներով երթեւեկելու ժամանակ այն-
չափ ծանրաբարոյ, լսակաց, համեստ և վեհանձն
էր, որի վերայ զովութեամբ էին խօսում մեծ
մարդիկ անդամ։ Խաչակին թէև աղայ էր հասա-
կաւ, սակայն փայլում էին յայտնապէս իւր վերայ
կատարելութեան այն ամեն նշաններն, որք համա-
խմբուած, են լինում երբեմն հազուազիւտ անձնա-
որութեանց մէջ։ Տղայի այս կատարելութեան
նշաններից ենթալլում էին ուսուցիչք և շատերն,
որ նու ապագայում իր լինի մի ականաւոր, զոր-
ծունեայ և իսելքով ու հանձնարավ եղակի մարդ։
Հարկ չ'կայ ասել թէ Խաչակին ամեն կողմից
վայելում էր սէր, յարդանք և պատիւ։

Խաչակի առանձնասենների զբանականի հան-
գես կախուած էր միշտ շաբաթական գասացու-
ցակին, որի վերայ, ամեն երեկոյ ընթրիքից յետոյ,
նայելով պատրաստում էր հետեւել աւուր դա-
սերը։ Գասերը պատրաստելուց յետոյ նու աղօ-
թում էր և քնանում։

Իւր հասակի աճման հետ անում էին և իւր
ուսունքն, լրւաւորուում միաքն, ընդարձակուում
զաղափարներն, զարգանում գատողութիւնն և
բարձրանում ձգուամներն։ Նու չափազանց սիրուն

Էր երեք առարկայ — երդեցիկ թունոց զայլայլիկ
ներք, անուշահոս ծաղկանց զեղեցկութիւնը և
պարզ երկնից լուսաւորները:

Օ.

ԽՍԱՀԱԿԻ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ

Խսահակն իւր պարտապ ժամերում յաճախ կար-
գում էր հայերէն, ուսւերէն և զազզերէն ընտիր
հեղինակութիւններ և լատիններ մանաւանդ մեծ
արձակուրդների ժամանակ: Այն ընթերցումից
նորա մեջ յզացան մարդասիրական ձգաւոմներ և
կրօնական վսեմ զբացմներներ: Առ ինդրեց իւր
հօրից, որ իրան յատկացներ իւր հարսաւոթիւնից
մի փոքր մասը: Հայրն սիրով կատարեց այդ ա-
ռաջարկութիւնը: Խսահակն այդ գումարով բերել
տուաւ պատմական, վեպական, բարօյական, փիլե-
սոփայտական, չափական, հաշուական, հայերէն,
ուսւերէն և գազզերէն զրեանք և լատիններ և
սոցանով բարեկարգեց մի առանձին և զեղեցիկ
թանգարան: Առոտ նպատակն էր այս միջոցաւ
մասակարգել ագքատ ուսումնասիրաց ձրի օգնու-
թիւն: Ամեն կեսրից յիշոյ ժամի ըորսից մինչև

եօթն հաւաքւում էին այդ նոր թանգարանում
հայոց աղքատ տղայք և պատանիք և կարգաւ
կարգում այդ պաքերը և ապա գնում խրեանց
տներն: Վրքեր տանողներն ստորապլում էին
սաացման աեալակում և վերագարձնելուց վերջն
ջնջում ըստ կանոնի Խսահակին: Խողնում ենք
ընթերցողաց իմաստասիրել այս թանգարանի ըն-
ծացած օգուաները, որովք զգում էր Խսահակն
անբացաղիկ ուրախութիւն և միսիթարութիւն,
նցնալես և իւր աղնիւ ծնողքն:

Ա երե ասացինք թէ ա (Խոհոն) շտոշանց մի-
րում էր երեւ սուրբիւ երեւանի բանոց բայլուկները, ուսու-
մանու ժողովունց էեղեցիւնեւը և որոր երբից լուսունները,
Քաղցրախօս գեղձանիին, որն միշտ երգում էր
Խսահակի առանձնասենեակում, անուշահոս ծա-
ղեկներն, որք փունջ փունջ շարտած էին լինում
նորա թանգարանի շուրջն, աստեղապարտ երկինքն,
որը նա աեսնում էր պարզ զիշերներում, սաստիկ
զգուռում էին նորա կրօնական զբացմներները և
բարձրացնում նորա վսեմ ձգտութերը: Եյս զգաց-
մանց և ձգտմանց ոչ ինչ պակաս ոգի էին ներշըն-
շում և բնութեան վերայ զրուած բանաստեղծու-
թիւններն, զրս կարգում էր նկքն: Խսահակն
բնութեան մէն մի երեւթի վերայ նշմարում էր
Խսառածութեան արարչական զօրութիւնը և
ներկայութիւնը: Եյս պատճառաւ նա ստեղծում

Եր նոր նոր անուններ. օրինակ արեգակը և լուսինը անուանում եր “Աստուծոյ աշեր”, աստեղները կոչում եր “անցուան”, անիւզ, մշտավառ կանթեղներ», երկինքը “անկար և անցենարան վրան Աստուծոյ», անձրեր և ձիւնը “օրհնութիւն Աստուծոյ”, աղեղը “Աստուծոյ ողբութեան կամուրջ» սրբառումը “զգասացուցիչ ձայն Աստուծոյ և կայծակը “շանթ մեղաւորաց», քամին, զեփիւոր և սիւքը “շունչ Աստուծոյ», խօսնակ թուզունները “Աստուծոյ արէլուիս երդող», ծաղկանց անուշահսութիւնը “կենաց հոտ», ջրվէժները և գետակները “անդադար օրհներգուք Աստուծոյ» ևն, ևն, ևն:

Խսահակն եկեղեցի եր յաճախում և ջերմեսանդութեամբ աղօթում միսյն շաբաթը երեկոյներն, կիւրակէ առաւօններն և կիսօրներն, վասն զի նա ամբողջ շաբաթն զբացուած եր լինում գասերը սերակիւ և զրելու ծանրութիւններով և թանգարանի գործերով։ Եյտու ամենայնիւ նա ամեն առաւօտ, երեսը լուանալուց յետոյ, իւր առանձնասենեակում աղօթում եր, նոյնպէս և քնանալու ժամանակ։ Նա առաւօտեան աղօթքում “Հայր մեր” Տէրունական աղօթքին կցում եր և “Լոյս արարիչ լուսոյ, առաջին լոյս» Երեակալի աղօթքի չորս առանձը. իսկ հանգստանալու ժամանակ “Որդի՛ Աստուծոյ կինդանւոյ» նարեկը։

1886 թիւն է և Յունփարի մէկն։ Խսահակն ստացած է սոյն շրջանի Բ. քառորդի յառաջադիեմութեան թուանշանները։ Գոհցացուցիչ են իւր թիւերն և ինքն ձգառում է առաջեկայ Մեպաեմբերին փոխուիլ Ե. Գասպարանն։

Ե.

Ճ Ի Ւ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Խսահակն տասն և վեց օրեց յետոյ լսացնելով իւր տասն և երեքերորդ տարեշրջանը՝ մտնելու է տասն և չորրորդն։ Խսահակն ունի միջակ բարձրութեամբ հասակ, հրեշտակային և սպիտակ գեմք, կրորակ և գեղեցկածե վլուխ, սաթագյն և կակուզ մազեր, լայն և պարզ ձակատ, թուխ և աղեղնաձե յօնքեր, սրաբիր և նախշուն աչքեր, խիս և սեղրակ արտեանունքներ, ուղղաձիկ և կանսնաւոր քիթ, սպիտակ և ուսուցիկ այտեր և ափաւոր մեծութեամբ բերան։ Իւր ձայնն բարակ է, ելեւջն քաղցր, խօսակցութիւնն դուրալի, խօս-

քերն իմաստալից, տեսակցութիւնն սրտագրաւ և
ընկերականութիւնն ախորդելի։ Իւր միտքն յատակ
է, սիրան մաքուր, գատառութիւնն առողջ, խոշմբ-
տանքն կենդանի, խորհուրդներն օգտակար, գաղա-
փարներն բարձրաթուիչ և աւելնն խանդավառ։
Եց բոլոր առանձնայտակութեանց ապացոյց են
իւր գործերն, որոց մէջ իւր ՚ի հայելոջ անդրա-
գառնում են այդ առաքինութիւններն։ Իսկ իւր
ֆիզիքական կազմուածքն նուրբ է, թէ և այն ե-
րևումէ արտաքուստ պնդակազմ։ Իսցց այսու ամե-
նայնիւ միշտ առողջ էր և, համարեա թէ Ռէալնու
քառամեայ շրջաններում մէն մի տարուայ մէջ, հազիւ
թէ չորս անդամ բացակայ գանուած էր գասերից։
Եց բացակայութեան պատճառներն իւր աղջակա-
նաց հարսանիքներում անդուն մնան էին և ոչ
հիւանդութիւնն, որը բնաւ ըռներ։

Յունվարի 5-ին առաւօտեան Ռէալնու Հայ
փոքրահասակ աշակերտաց հետ Խսահակն ևս հա-
ղորդուեցաւ Վրիստասի կենարար և մեղսաքաւիչ
Խորհրդին և վերագրածւ առն։ Սա ճաշեց յե-
տոյ յայտնում է իւր ծնողաց, որ ինքն զգում է
իւր մարմնոյ բոլոր մասերում կոկծեցուցիչ ցաւեր։
Նախ հրաւիրում է Պարոն-Մինասից մի բժիշկ,
ապա բոլոր բժիշկներն։ Առքա կազմում են բժշկա-
կան խորհուրդ։ Խորհրդականաց ամենի կարծիքն
կեզրոնանում է այն եղակացութեան մէջ, որով

վճռում են թէ «Խսահակի հիւանդութիւնն բարդ
յօդացաւ է»։ *) Բոլոր բժիշկներն ամեն օր երեք
անգամ զալիս էին հիւանդի մօա, առաւօտեան,
կեսօրին և երեկոյեան։ Առքա ամեն ջանք ՚ի գործ
էին գնում, որ առնեին ցաւի առաջքը, մինչդեռ
այդ ցաւն, նոցա հասկացողութեամբ, հասած չէր
հիւանդին ներսի գործարաններին։ Աթէ հասնելու
լիներ, ամենամեծ վանդ կըսպանար հիւանդի
կեանդին անկասկած։

Յունվարի 10-ին լսեցի Խսահակի հիւանդու-
թիւնը և աճապարանօք գնացի այցելել։ Գատի
հիւանդագին իմ ամենասպիրելի աշակերտը, որն,
ինչպէս երեւում էր, նեղուում էր յօդացաւիցն։ Նա
սահմա սահմա ուշուցում էր, ձրոճուում և շափա-
զանց արագութեամբ շունչ տալիս և առնում։
Նրբ ջերմացարը հանեց Պարոն-Մինասն հիւանդի
կանատակից, տարութիւնն հասած երեցաւ մինչև
40 աստիճան։ Եցաւ ամենայնիւ նա յայտնեց թէ
երեկուանից 5 աստիճան պակասած էր ջերմութիւնն։
«Ծնողքն, եղարքըն և քոյրերն պատած էին հի-
ւանդին մաշճակալի շուրջն և զորսվագութ սիրով
կատարում էին նորա զրամանները և կամենում
էին հող ու մոխիր գառնալ նորա սոից տակ։
Խսահակն զիս տեսածին պէս, ՚ի պատիւ իմ առ

*) Плеврить, осложненный ревматизмомъ сочленений. Рев-
матизъмъ сочленовиный, осложненный плевритомъ.

վայր մի մոռացաւ իւր ցաւերը և նստաւ մահճումնի:
Ողջուներվ բոնեցի նորա աջ ձեռնը խնդրեցի
կրկին ընկողմնիլ և հարցրի:

— Խսահակ ջան, ինչպէս եք այժմ:

— Լաւ չեմ, հայր սուրբ, պատասխանեց նա
ցաւագին ձայնով:

Կիատելով որ նորա սրտաճմիկ ծնողքն ար-
դէն շափազանց վշտահար էին, փութացայ նշմար-
ներով քաջալերել հիւանովը, որ սրտապնդուելով
խնայեր նոցա, բայց նա զանցառութեան տուաւ այդ,
անշուշո ցաւոց ստատկութեան պատճառաւ:
Խս
աշխատեցի գեթ խօսքով ընդունել տալ այդ առա-
ջարկութիւնը, վասնորոյ կարեկից ձայնով ասսցի.

— Խսահակ ջան, ինչպէս Ձեր հայրն վկայում
է, այժմ լաւ եք նախորդ օրերից, Վատուծով
կտորդանաք և շուտով ուսումնարան կը գաք:

— Երբ միւս անգամ այցելութեան դաք, այն
ժամանակ կը տեսնէք թէ ինչպէս կը լինիմ ես,
կը տեսնէք թէ ինչպէս կը լինի Ձեր սիրելի Խսա-
հակն. որովհետեւ իմ խօսքին չեք հաւատում դուք:

Հիւանդի վերջին խօսքերն ստատիկ յուղեցին
իմ միտքը և շարժեցին իմ սրտի բոլոր թելերը:
Մի քառորդ ժամ տեսակցելուց յետոյ չկարողացայ
այլ ևս երկար զիմանալ այս բարոյական ցաւոց
բուսն Ճնշմանց, մաղթեցի առողջութիւն և հե-
ռացայ արտասուագին:

Սակայն բժիշկներն տակաւին կտրած չէին
իւրեանց յցար, վասնորոյ ստէպ ստէպ այցելում
էին հիւանդին և տալիս հարկ եղած հրամանները
և գեղատոմսերը:

Խնչպէս ես, նմանապէս բոլոր ուսուցիչներն
ամեն օր մարդիկ զրկելով տեղեկութիւն կինք ըս-
տանում Խսահակի առողջութեան մասին։ Յուն-
վարի 12-ին աւետեցին լրաբերներն թէ Խսահակն
այժմ բաւականին լաւ է և հետպահեած նորա ցա-
ւերն տեղի են տալիս առողջութեան։ Եյս աեղե-
կութիւններն պատճառեցին մի անբացարելի ու-
րախութիւնն այն ամեն անձանց, որք ճանաչում,
սիրում և յարգում էին Խսահակը։ Հարկ չ'կայ ա-
սել որ Յունվարի 12-ին գրեթէ Ռէալնու բոլոր
աշակերտաց համար եղաւ մի ամենամեծ ուրախու-
թեան և ցնծութեան տօնելի օր։ Այն ուրախու-
թիւնն և ցնծութիւնն անդրագառնալով վարժա-
պեաների սրտերից աշակերտաց սրտերն և աշա-
կերտաների սրտերից վարժապեաների սրտերն՝ պայ-
ծառ վայլում էին միախառնուած բոլորի զիմաց
վերայ։

Վոյն տուոք երեկոյիան գէմյանձնում է իւր թանդարանի բանալին իւր հօր, ինզրելով որ լու պահպանէ իւր թանդարանը և ոչ ոքին չշահնձնէ, այն բանալին։ Խահակին վերջին անգամ համբուրումէ ջերմագին իւր ծնողաց ձեռները, աղօթումէ մասովի մի քանի լոտի, ապա կրկին թեքում իւր մահճում և յեաց ժամի 5-ին փակում իւր աշքերը գեղի յաւիսենականութիւն։

Յունվարի 16-ին և տուաւոտեան աասներորդ ժամին տեղի ունեցաւ յուղարկուորութեան հանգեսն։ Հանգիսին ներկաց են, համարեա թէ, Ծոշու բոլոր քահանացք, Անապատի կուսանք, զրքուկիս հեղինակն, քաղաքապեան, հաշապար գատաւորն իւրեանց պարագայիւք, ողջ բժիշկներն, ամբողջ պաշտօնական անձններ, ախտղոսաւորք, իշխանք, Հոգեւոր Ուսումնարանի Տեսուչ պ. Մովսէս Սամուելեանցն բոլոր ուսուցիչներով և աշակերտաց երգեցիկ խմբով, Քեալնու Դրեքար պ. Միթայել Սաւել Տարատամին, իւր օգնական պ. Միթայել Նիկիֆորովիչ Ծմանովսկին ամբողջ վարժապեաներով, աշակերտաներով և միանդամայն ժողովրդեան մ.ծ բաղմութիւն։ Եյս ախուր հանգեսն հոգեւոր արարողութեամբ և երգերով շարունակելով մասու Կաղանչեցւոց եկեղեցին։

Դադաղի առջեկց, բարձր բոնած, աանում էն Քեալնու Դ. Դասարանի աշակերտաներից երկուսն



ԽՈՐՃՐԴԱԿՈՐ ՊՍԱԿ

Յունվարի 13—14 համեմատարար թէթեանում եր Խահակի հիւանդութիւնն։ Խնկ 15-ին տուաւոտեանից հիւանդն սկսումէ փոխուիլ։ Խահակին հաշեց յեաց սահեպ սահեպ համբուրում է մերթ իւր հօր և մերթ իւր մօր ձեռները և համբուրում իւր եղբայրների և քցրերի հեա։ Փայրում են գեղածիծաղ ժպիաներն նորա շրմանց վերայ, զուբգուրում եր ուրախութիւնն նախա այտերի շուրջն և ծածանում են հեղասահ ալեաց նման նորա քաղցր նայուածքն իւր առաց ծովերում ինչպէս յատուկ են իւր բնաւորութեան առողջ ժամանակներում։ Կարծես թէ տեղի տուած էն իւր ցաւերն առողջութեան և ինքն այդ ձեւերով և շարժուածքներով ճղնում եր ապահովել իւր ծնողքը իւր տաղջութեան մասին։ Եյսպիսով կարողանում է գեթ երկու ժամ միթթարել և սփոփել իւր շուրջն բոլորած գերգաստանը։

մի Խորհրդական Պետչ^{*)} , որն արայացտում էր Ռեպնու ամբողջ պաշտօնակալաց և ուսանողաց Խառհակի գերայ ունեցած մեծ սիրոյ , խորին յարգանաց և արժանավայել պատույ նշանաբանը :

Պատարագից յետոյ Դ. Գասարանի աշակերտներից մին կարգաց մի ձառ , որով նա , թարգման հանդիսատնազով իւր ընկերակիցների կողմց յայտնեց խորին ցաւակցութիւնն Խառհակի յաւիտենական բաժանման մասին . միքատմիոջէ թուեց հանգուցելոյն օրինակելի ձիգքերը . թէ հանգուցեալն անբաժան էր իւր ընկերակիցների մաքերից ,

*) Հին գարերում այսպիսի յաղթական պահները նույրում էին միայն հայրենիքի թշնամեաց յաղթող գիցազուններին , հայրենեաց պատուք քաջերին , հայրենիքը պաշտպանող ախզեաններին և նոր նոր երկիրներ գրաւողներին : Բայց 19-դ դարում պատահի պահները նույրում են հեռատես քաջարագէաններին , հեարիմաց ռազմագէտներին , երեկի փիլիսոփներին , ճարտարախոս ճարտասաններին , նշանաւոր հեղեններին , ապագանդաւոր վիպասաններին , ականաւոր բանասակադներին , բազմարդին ուսուցիչներին , գաստիարակութիւններին , գերասաններին , գերասանուհիներին , ևն , ևն : Խառհակին տակալին ուոք կոխած չեր ոչ առաջնոց քաջութեան ուահմաններն և ոչ վերջնոցս տաղանդի շեմերն : Աւրեմն ինչ նշանակութիւն աներ հանգուցելոյն նույրուած այս պահն : Խորհրդաւոր նշանակութիւն : յաջ թանակ առաքինութեան և պատկանած միաւոր համար գալու մասին : Հաջորդ է ասել թէ այս Խորհրդաւոր Պատմի միայն ներքին զգացմանց արտաքին նշանն էր : Սակայն հանգուցեալն թեալնու բոլոր ուսուցչաց և ուսանողաց պատրում պատրաստած էր իւր համար բազմաթիւ բարյական և անդին պահներ , որոց չարժէ աշխարհս իւր բոլոր նիւթական հարսաւութիւններով և վաղանցուկ փառքերով :

յիշողութիւններից և սրաերից և թէ նա սլացաւ և միացաւ չոգւով Նրէշակաց գասակարգութեան :

Խօսուեցաւ և մի համառօտ , բայց արտասուաշարժ գամբանական , որի մէջ բացարժուեցաւ հանգուցելոյն , դեռ այդ ծաղիկ հասակում , առ Ըստուած , առ եկեղեցին , առ Եղին , առ իւր ծնողքն , առ ուսմունքն և առ իւր ընկերակիցներին ունեցած խանգամառ սէրն և հազուագիւտ վարքն և բարքն . թէ որքան ցաւ էին զգում հանգուցելոյն ծնողքն և ազգակիցներն , եռապատիկը զգում էին և նորա գասահարակ ուսուցիչներն և ընկերակիցներն . թէ վարժապեաններն Խառհակի մէջ ամբարուած բարեմասնութիւնները պարտական էին նորա ազնիւ ծնողաց , որք ընտանեկան գասահարակութեամբ հասցրած էին այդ աստիճաննին . թէ հանգուցեալն ցոլցնում էր մեծ յուսոյ նշաններ , ապագայում իւր տաղանդներով ծառայելու իւր Եղին , թէպէտ Խառհակի վախճաննեցաւ մարմնով , սակայն նա անմահ է իւր առաքինութիւններով . և թէ աջան առ ապիս է իւր վերջին ողջոյնը իւր սիրած եկեղեցւոյն և ժողովրդեան , իւր պատուած ծնողներին և ուսուցիչներին , իւր յարգած ազգականներին և ընկերակիցներին և զնում և հանգելու իւր յաւիտենական ծնողի զրիում : Վամբանական վերջացաւ բոլոր սկաւորաց սփոփանք և միսիթարութիւն մաղթելով :

Յուղարկաւորութեան տիտուր հանդէսն եկեղեցուց ելաւ և յառաջեց գէպի Աւերին-Հանզըստարանն։ Թէ տանիցն և թէ եկեղեցուցն հանզըստարանն ասնելու ժամանակ դադաղը կրում էին միշտ Թէալնու վարժապեսներն փոփոխակի։ Յաճիս մասնակցում էր այդ գործին ինքն պատուարժան Տարասով։ Եց համակրութիւնն մի ամենամեծ ապացոյց է և անչերքելի փաստ որ հանդուցեալն վերին աստիճան սիրուած, յարգուած և պատուած էր ամբողջ ուսուցիչներից։

Առգեոր աղարողութիւնից վերջն՝ հանդուցելոյն դիակին հանդէցաւ իւր պապ Մահասի-Գրիգորի շերմին աջ կողմում—դրկում։

Եհա միւսանգամ այսպէս զտայ ևս իմ սիրելի Խոահակը, որն մի քանի օր առաջ ասած էր ինձ մարդարէաբար. «Նրբ միւս անգամ այցելութեան դաք, այն ժամանակ կը տեսնէք թէ ի՞նչպէս կը լինիմ ես. կը տեսնէք թէ ի՞նչպէս կը լինի Զեր սիրելի Խոահակն . . .»։

ՊՐԵՊԵԿ

<u>երես</u>	<u>տող</u>	<u>սխալ</u>	<u>ուղեղ</u>
Ի.	14	Ճեթումեան. . .	Ճեթումեանց
"	24	պատրաստումեն պատրաստումեն	
"	25	վառօա վառօդ	
"	25	բերդակից բերդակիցն	
"	6	պարտիզե, սարն աւելորդ է	
"	12	զաթնում էր . . . զաթնում էր	
"	19	զրել. զրել	
"	5	ժամաներում. . . ժամանակներում	
"	14	հարցիան հարցական	
"	22	Նեկանդեան . . . Նրուանդեան	
"	22	համար. աւելորդ բառ է	

ԱՐԺԻ



ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ԱԴԱՄԵԱՆՑ

1886 թ. Հունիսի

ՀՀ Ազգային գրադարան



NL0247778

